Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ԹԻՎ ԹԻՎ 10-Ն, 11-Ն, 15, 16 ԵՎ 18 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 10-Ն որոշման վերնագրում և բովանդակության մեջ փոփոխվող նորմատիվ ակտի տարեթիվը տարբեր է գրառված:

Թիվ 11-Ն որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում, հետևաբար որոշման հերթական համարից հետո «Ն» տառի նշումը սխալ է:

Որոշման հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետին սխալ է:

Թիվ 15 որոշման 1-ն կետում նշված չէ ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականություն համարված 81,96 քառ. մետր մակերեսով բնակելի տան (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, Հոլանդական թաղամաս 5-րդ փողոց, 32 բնակելի տուն) ուղղակի վաճառքի գինը:

Թիվ 16 որոշման հղումը սխալ է: Հղում պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին: Որոշման մեջ նշված չէ օտարվող տեխնիկաների տեսակը և քանակը:

Բացի այդ, համայնքի ավագանին, որպես աճուրդի կազմակերպիչ, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն պետք է հաստատի աճուրդի կանոնակարգ (հրապարակային սակարկությունների կազմակերպչի սահմանած փաստաթուղթ)՝ որում նախատեսվում են նշված օրենքին համապատասխան կազմակերպչի կողմից սահմանման ենթակա դրույթներ:

Թիվ 18 որոշման մեջ անհրաժեշտ է գրառել բոլոր նվիրառուների անունները, ազգանունները և հայրանունները:

Կատարող Ս. Ավետիսյան
05.06.2020թ.